ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 1148

«14» սեպտեմբերի 2023թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք
Մարտունի,Շահումյան փողոց 2
☎ 060743401
☎ Էլ.փոստ՝ info@martuni.am

«ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ԻՆ
ՀՎՀՀ (08414141)
ՀՀ Երևան, Հ. Հովհաննիսյան 24/7
Հեռ: +37455755455

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի և «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ի միջև 05.01.2023թ. կնքված N ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-22/24-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ն պարտավոր էր 2023թ. ընթացքում Մարտունու համայնքապետարանի ենթակայության Մանկապարտեզների կարիքների համար մատակարարել՝

1. Բարձր տեսակի ցորենի ալյուր 985 կգ
2. Կաղամբ – 4590 կգ
3. Կանաչի խառը – 2553 կապ
4. Գազար – 2250 կգ
5. Բազուկ - 1250 կգ
6. Խնձոր – 3400
7. Բանան 2250 կգ
8. Նարինջ – 700 կգ
9. Մանդարին – 700 կգ
10. Կիսել – 2100 կգ

11. Ջեմեր – 900 կգ
12. Միս տավարի – 5000 կգ
13. Կարագ – 2600 կգ
14. Ձեթ (բուսական յուղ) – 2500 լ
15. Տոմատի մածուկ – 600 կգ
16. Մակարոն – 1750 կգ
17. Սպիտակաձավար – 850 կգ

Քանի որ վերոնշյալ ապրանքները չեն մատակարարվել, ուստի հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի)՝ Մարտունու համայնքապետարանը 2023թ. սեպտեմբերի 11-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը՝ չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում ենք, որ «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետարան 900145001484 հաշվեհամարին փոխանցել 178 120 (մեկ հարյուր յոթանասունութ հազար մեկ հարյուր քսան) ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագիր 6.2 կետի համաձայն), տույժը հաշվարկված է մինչև 10.09.2023թ. ներառյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվը առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 5 433 385 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 8 150 077

ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000698 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2023թ. սեպտեմբերի 21-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 5 433 385 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 8 150 077 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2023թ. սեպտեմբերի 20-ը ներառյալ ներկայացնել Մարտունու համայնքապետարանի գնումների բաժին, 4-րդ հարկ:

Համայնքի ղեկավար Հ. Հովեյան

Կատարող՝ Է.Գրիգորյան
Բաժին՝ Գնումների բաժին
Հեռ. 077270194